ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1522

01.03.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի մարտի 27-ին Դիտորդական խումբը այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արտաշատի ՁՊՎ, որի ընթացքում արձանագրվել են մի շարք թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

1. Առաջին խցի լվացարանը և առկա սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում:
2. Առաջին և չորրորդ խցերում առկա սրբիչները գտնվում էին կեղտոտ վիճակում: *կից ներկայացնում ենք լուսանկարներ -16*
3. Լոգարանը և զուգարանը գտնվում էին կեղտոտ, հակահիգիենիկ վիճակում: *կից ներկայացնում ենք լուսանկարներ -21,22*
4. Բուժմենյակի ջրի ծորակը խափանված էր և ջուրը անընդմեջ հոսում էր:
5. Ընդհանուր ՁՊՎ-ի խցերը քայքայված և վնասված են և վերանորոգման կարիք է զգացվում: *կից ներկայացնում ենք լուսանկարներ -17,18,19,20*

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՑ № 1402
«02» 04 2015թ.

ՀՀ ՈՍՏԻԿ[illegible] ԱՆՁՆԱԿԱԶՄ
ՄՏԻՑ [illegible] 2054
«02» 04 2015թ.

Խախտումներ՝

ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Արտաշատի ՁՊՎ-ում արձանագրվել է, որ խախտվում են անձանց ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի, ՀՀ քր. դատ. օր-ի 129-131 հոդվածների, ինչպես

նաև Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածների պահանջները, այն է՝ արգելվում է անձին պահել անազատության մեջ՝ 72 ժամից ավելի: Միաժամանակ չի պահպանվում ՀՀ ոստիկանության կողմից տրված օրենսդրության տվյալ պահանջի հանձնարարականը: Ասվածի ապացույց է հանդիսանում այն հանգամանքը, որ՝

1. Արթուր Սուրենի Կարապետյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Մասիսի բաժին <<Զվարթնոց>> օդանավակայանի գծային բաժնից 26.01.2015թ-ին ժամը 18.40-ին: Ձերբակալվել է նույն օրը, ժամը 19.50-ին և ազատ է արձակվել 29.01.2015թ-ին ժամը 19.50-ին Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազ Հ.Ռ.Սաֆարյանի որոշման համաձայն: Արդյունքում՝ Ա. Կարապետյանը արգելանքի տակ է գտնվել 73 ժամ 10 րոպե, 1 ժամ 10 րոպե ավել: *կից ներկայացնում ենք լուսանկարներ -1,2,3*
2. Վրեժի Վարդանյանը ոստիկանության Արտաշատի բաժին բերման է ենթարկվել 27.01.2015թ-ին ժամը 12.25-ին: Ձերբակալվել է նույն օրը՝ ժամը 20.10-ին, ազատ է արձակվել 30.01.2015թ-ին ժամը 18.30-ին: Արդյունքում՝ 1. Վ. Վարդանյանը բերման ենթարկելուց հետո 7 ժամ 45 րոպե հետո է ձերբակալվել: 2.Արգելանքի տակ է պահվել 78 ժամ 5 րոպե, 6 ժամ 5 րոպե ավելի:

   Միաժամանակ հարկ ենք համարում փաստել ևս մեկ հանգամանք, որ 06.02.2015թ-ին անհասկանալի հանգամանքներում Վաչե Վրեժի Վարդանյանի անձնական գործը ստացել է առանց պաշտոնը և կոչումը նշելու ոստիկան Ա. Ավետիսյան ազգանունով, Վ. Վարդանյանի հետ միասին ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ տեղափոխելու համար:

   Կրկին փաստենք, որ Վ. Վարդանյանը ազատ է արձակվել 30.01.2015թ-ին ժամը 18.30-ին դատարանի դահլիճից և հաջորդիվ, մինչ ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ տեղափոխվելը չի ձերբակալվել և ՁՊՎ չի ընդունվել և անհասկանալի է ներկայացրած ստացականի առկայությունը և նրանում պարունակող բովանդակությունը *կից ներկայացնում ենք լուսանկարներ -4,5,6,7*
3. Աշոտ Անդրանիկի Հակոբյանը, Արթուր Հովիկի Ալեքսանյանը, Միհեր Մանվելի Օհանյանը և Լյուդվիգ Կարենի Քոչարյանը 08.02.2015թ-ին ժամը 10.40-ին բերման են ենթարկվել ոստիկանության Արարատի ՄՎ Արտաշատի բաժին: Նշված անձիք ձերբակալվել են ՀՀ օրենսդրության խախտումներով՝
   - Ա. Հակոբյան – 08.02.2015թ-ին ժամը 20.30, 9 ժամ 50 րոպե անց
   - Ա.Ալեքսանյան – 08.02.2015թ-ին ժամը 22.00, 11ժամ 20 րոպե անց
   - Մ. Օհանյան – 08.02.2015թ-ին ժամը 23.20-ին, 12 ժամ, 40 րոպե անց
   - Լ. Քոչարյան – 08.02.2015թ-ին ժամը 20.00-ին, 9 ժամ, 20 րոպե անց:

Հաջորդաբար 3 անձանց դեպքում արգելանքի տակ պահելու 72 ժամը խախտվել է՝ 9 ժամ 15 րոպեով: Իսկ Լ. Քոչարյանի դեպքում արգելանքի տակ պահելու 72 ժամը խախտվել է՝ 7 ժամ 10 րոպեով: *կից ներկայացնում ենք լուսանկարներ -8,9,10,11,12,13,14,15*

Այսպիսով՝ Դիտորդական խումբը խնդրում է ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն և միաժամանակ Դիտորդական խումբը խնդրում է, որպեսզի ներկայացված փաստերը ոչ մի կերպ չորակավորվի որպես վրիպակ կամ անփույթ աշխատանքի արդյունք, որովհետև ներկայացրած փաստերը բոլորը հիմնավորված և ապացուցներով ներկայացված են: Իսկ Դիտորդական խմբի նման մտահոգությունը կապված է նրանով, որ շուրջ երկու տարի է, տվյալ բաժնի, տվյալ ՀՊՎ-ի նկատմամբ գերատեսչության մոտեցումը այլ է:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք. Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-66-36, Ֆաքս՝ (010) 59-63-11

№_____

«06» 05 2015 թ.

2/2-1-1440

Ձեր 01.04.2015թ. թիվ 2621/1522 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ տիկին Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2015թ. մարտի 27-ին ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Արտաշատի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Արարատի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

Նշված բոլոր թերություններն արդեն իսկ վերացվել են: Ինչ վերաբերվում է խցերի վերանորոգման հարցին, ապա այն արձանագրվել է նաև ՀՀ ոստիկանության շտաբի հերթապահ ծառայության վարչության ղեկավարության և ծառայողների կողմից ս/թ մարտ ամսին գործնական-մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով ոստիկանության Արտաշատի բաժնի ՁՊՎ կատարած այցելության ժամանակ և հանձնարարվել էր միջոցներ ձեռնարկել խցերի վերանորոգման աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ: Այդ կապակցությամբ դեռևս 24.03.2015թ. ոստիկանության Արտաշատի բաժնի ղեկավարությունը գրություն է ուղարկել ՀՀ ոստիկանության տնտեսական վարչություն: Քանի որ նշված հարցին լուծում տալու համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, այն ներկայումս գտնվում է ուսումնասիրման և քննարկման փուլում:

Խախտումներ.

1. Ա.Կարապետյանին սահմանված 72 ժամից ավելի արգելանքի տակ պահելու հանգամանքը հիմնավորվել է, ինչի համար ոստիկանության Արտաշատի բաժնի հերթապահ մասի պետը և հերթապահ մասի պետի ժամանակավոր պաշտոնակատարը ենթարկվել են կարգապահական պատասխանատվության (հայտարարվել է նկատողություն), իսկ ՁՊՎ-ի երեք ոստիկաններ խիստ նախազգուշացվել են:

2. Վ.Վարդանյանը ոստիկանության Արտաշատի բաժին բերման է ենթարկվել 27.01.2015թ. ժամը 12.25-ին և մինչև օրենքով սահմանված երեք ժամը լրանալը՝ ժամը 14.00-ին ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Արտաշատի քննչական բաժին: Արտաշատի քննչական բաժնի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ հարուցված քրեական գործի շրջանակներում Վ.Վարդանյանը հարցաքննվել է որպես վկա, այնուհետև հարուցվել է նոր քրեական գործ, որից հետո Վ.Վարդանյանի վերաբերյալ նշանակվել է տոքսիկոքիմիական փորձաքննություն: Վերջինս նույն օրը ներկայացվել է ՀՀ ԱՆ նարկոլոգիական կենտրոն և նրանից համապատասխան նմուշ ստանալուց հետո Արտաշատի քննչական բաժնում ժամը 20.10-ին ձերբակալվել է և տեղափոխվել ՁՊՎ: Մինչև ձերբակալվելը Վ.Վարդանյանի ազատությունը չի սահմանափակվել, նա ունեցել է ազատ տեղաշարժվելու իրավունք, ուստի նրան արգելանքի տակ պահելու ժամանակը ՁՊՎ վարչակազմի կողմից հաշվվել է նրա ձերբակալման ժամից և արգելանքի տակ պահելու սահմանված 72 ժամը չի խախտվել: Վ.Վարդանյանը 30.01.2015թ. ժամը 18.30-ին ազատ է արձակվել դատավորի որոշման համաձայն: Այնուհետև, 06.02.2015թ. քննիչը, Վ.Վարդանյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու նոր միջնորդությամբ դիմել է Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան: Դատարանի կողմից բավարարվել է միջնորդությունը, ինչի կապակցությամբ նույն օրը քննիչի կողմից տրված գրության համաձայն՝ Վ.Վարդանյանին ՔԿՀ տեղափոխելու համար ոստիկանության Արարատի մարզային վարչության ուղեկցող դասակի ոստիկանը ոստիկանության Արտաշատի բաժնի ՁՊՎ-ից ստացականով ստացել է Վ.Վարդանյանի անձնական գործի պատճենը, սակայն շտապողականության հետևանքով ստացականում չի նշվել ուղեկցող դասակի ու ՁՊՎ-ի ոստիկանների կոչումները և պաշտոնները, որի համար վերջիններս խիստ նախազգուշացվել են:

3. Ա.Հակոբյանը, Ա.Ալեքսանյանը, Մ.Օհանյանը և Լ.Քոչարյանը ոստիկանության Արտաշատի բաժին բերման են ենթարկվել 08.02.2015թ. ժամը 10.40-ին և մինչև օրենքով սահմանված երեք ժամը լրանալը՝ ժամը 12.00-ին ներկայացվել են ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Արտաշատի քննչական բաժին, որտեղ քննիչի կողմից ձերբակալվել են և տեղափոխվել ՁՊՎ: Մինչև ձերբակալվելը վերը նշված անձանց ազատությունը չի սահմանափակվել, նրարք ունեցել են ազատ տեղաշարժվելու իրավունք և քանի որ չեն հանդիսացել Արտաշատ քաղաքի բնակիչներ, ժամանակին նախաքննության մարմին ներկայանալու նպատակով մինչև ձերբակալվելը գտնվել են Արարատի մարզային քննչական վարչության և հարակից տարածքներում: Հաջորդիվ վերջիններս ներկայացել են նախաքննության մարմին, որտեղ ձերբակալվել են ու տեղափոխվել ՁՊՎ, իսկ ՁՊՎ վարչակազմի կողմից նրանց արգելանքի տակ պահելու ժամանակը հաշվվել է ձերբակալման ժամից և սահմանված 72 ժամը չի խախտվել:

Հաշվետվության 2-րդ և 3-րդ կետերով նշված անձանց վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար առաջարկվում է դիմել ՀՀ քննչական կոմիտե:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ